

հանգիստ ու անվրդով, ամէն ինչ կը ուած ու չափուծ, ֆրանսիա-կան զօրապետների եռուն գործը՝ ֆրանսիացիք, յարեց նա, պա-կաս հաւատով չեն վերաբերում վերջնական յաղթանակին:

Եսիսկոպոսը իրեն բնորոշ փառու պատմում է, որ վեօրդէնի դէմ զերմանական լնդհանուը յարձակութիւնին Փարիզի սակա-րանը պատասխանոց վեօրդէնի ամբողջ գծի բաժնի թղթերի ար-ժեքը բարձրացնելով, իսկ Դերմանիայում երզրումի ոռուների կողմից առնելը զերմանական մարկի գինը իջեցրեց:

Ա. ԹԱԼԻԿԻ ԵԿԵՂԵՑԻ

Վատիկանը և Երլանդիան: — Անգղիական կառավարութիւնն, ի նկատի ունենալով այն մեծ ազդեցութիւնը, որ կարող է ունե-նալ մօտ ապաղայում Վատիկանը ներկայ պատերազմի նկատ-մամբ, — մոռացութեան է տուել երեքդարեան թշնամական յարա-բերութիւնը Պապական աթոռի հետ, նորեք իւր խղուած յարա-բերութիւնն է վերականզնել, Պապական Դուռն մօտ իւր դեսպանն ուղարկելով: Այդ առաքելութեան հաստատութեան նպատակն է մի կողմից մաքառել զերմանական ազդեցութեան դէմ, միւս կող-մից ցոյց տալ Անգղիայում ապրող կաթոլիկներին, թէ Գէորգ արքայի կառավարութիւնն ամենալաւ յարաբերութեան մէջ է Պապական վարչութեան հետ: Վատիկանի հետ հաշտուելու բա-րոյական նշանակութիւնն այն կլինի, անշուշտ, որ միացիալ-թագաւորութեան մէջ ապրող կաթոլիկները կմօտենան երկրի վար-չութեան և կաթոլիկութեան անհաշտ հոսանքները կզրկուին Ան-գղիայի հերետիկոսների և «աղատ-որմնաղիրների» հետ ունեցած մաքառման դէնքից:

Դեռ ևս Իտալիայի այս պատերազմին մասնակցելուց շատ առաջ, զործերին կատարելապէս իրազեկ անձեր մատնացոյց էին անում, որ Իրլանդական հինգազմի ազդայնականները փափուկ բոյն են հիւսել Հռոմում, որտեղից Մհեմ-Բրիտանիայի դէմ մա-քառելու մարտակոչն է հնչւում և, որ, իրեն թէ, ըովէն այդ է պահանջում: Իտալական լրագիրները քաղուածներ են առաջ բե-րում Քըւաղրոտաայի յայտնի «Պապը, Իտալիան և Պատերազմը» վերտառութեամբ դրքից: Դրքի հեղինակը յատուկ վերլուծութեան է ենթարկում Դերման-Իրլանդական հարցը և Հռոմում ունեցած յարաբերութիւնները, ցոյց տալով, Յաւիտենական Պաղաքի Իր-լանդացի ներկայացուցիչները զերմանասէրներ են և Դերմանիայի հետ շատ սերտ և աշխոյժ յարաբերութեան մէջ են: Զպէտք է

մոռանալ, որ Հռոմի մէջ կայ չորս Իրլանդական կօլլեգիա և որ տասնեակներով չեն միայն այն անձերը, որ կաթոլիկ աշխաքհում բարձր և ազդեցիկ դիրքեր ունին դրաւած և որ Իրլանդական ալեղարդ արհիները դեռ ևս չեն մոռացած «Յ է ն ի էժների աւանդները Ռւստի և շատ հեշտութեամբ կարող էին հրապուրուիլ այն անկախութեան հեռանկարի խոստումներով, որ Գերմանիան հրամցնում էր նոցա և հեշտութեամբ ևս խաղալիք դառնային ճարպիկ և շահագրդուած դիւանագէաների ձեռքին:

Ոչ մէկից գաղտնի չէր այն մօտ և բարեկամական յարաբերութիւնները, որ Վատիկանի Գերման գեսպանն ունէր Իրլանդական կօլլեգիայի վերատեսչի և ուսուցչապետների հետ, ինչպէս և վարագուրուած չէր այն դերը, որ խաղում էր Հռոմի Անստուածաշնչի կաթոլիկ դպրոցի՝ տեսուչ՝ Թօնկ անունով մէկը։ Այդ գիտական ճիզուիտը, որ միաժամանակ և ուսուցչապետի պաշտօն և անուն էր կրում ինսրբուկի մէջ, Գերմանական բոլոր խարդաւանութիւնների ոգին է Վատիկանի շրջանում։ Մէրըիդել-վալը, Լէդուխովսկիին և Թօնկը (Նոյն և Թունկ), — այն եռապետութիւնն է կազմում, որ Գերմանական շահերի պաշտպանութիւնն էր յանձն առել Վատիկանում։ Հռոմի մէջ ապաստան գտած Իրլանդացիների անվերջ և անարգել յարաբերութիւնները Բերլինի և Դուրլինի հետ իրենց վերայ էին զրաւել ինդրին իրազեկ Իրլանդացիների ուշադրութիւնը և նոյն Քըւադրօտան տարուց աւելի էր, որ մատնացոյց էր արել, թէ Գերմանացիք զերի ընկած Իրլանդացիներին առանձին բանակետու են յատկացրել և նոցա մէջ որոշ մտքեր սերմանելով են զրադուած, միաժամանակ տալով այդ գերիներին իրերե խոստովանահայրեր և կրթիչներ յատկապէս Հռոմից այդ նպատակի համար բերել տուած Իրլանդացի քահանաներ։

Եթէ ինդրի իրազեկ անձերի նախազգուշացումներին հաւատով չէին վերաբերում, այդ նախազգուշացումները չափազանց կասկածամտութեան վերագրելով, — սակայն ապազայ դէպքերն արդարացրին և անցան իսկ ամենակասկածելի են յատկացրել և նոցա մէջ որոշ մտքեր սերմանելով են զրադուած, միաժամանակ տալով այդ գերիներին իրերե խոստովանահայրեր և կրթիչներ յատկապէս Հռոմից այդ նպատակի համար բերել տուած Իրլանդացի քահանաներ։

Բենեդիկտոս Ժե ճարպիկ և վտանգաւոր խաղերի զոհ է դարձել։ Պապի բարոյական ազգեցութեան ճիզերը անզօր են այն ուժեղ կրօնական-ազգայնական հոսանքի նկատմամբ, որի գլուխ են կանգնած իրլանդական արհիները։ Հին, անհաշտութեան քաղաքականութիւնը դեռ ևս շատ ականաւոր ու ազդեցիկ ներկայացուցիչներ ունի Վատիկանի մէջ, ուստի և Բենեդիկտոս Ժե համար շատ էլ հեշտ չէ նոր հոսանք ստեղծել։

իրլանդիայի վերջին ապստամբութիւնը բոլորովին ապշեցրեց Հռոմէական վարչական շրջանը։ Սկսած Ապրիլի 14-ից Պապը բազմիցս խորհրդակցութիւններ է ունեցած Հասկէ ծիրանաւորի և Անգղիայի Վատիկանում ունեցած դեսպան սեօր Հօվարդի հետ, ինչպէս բազմաթիւ բուն Անգղիացի բարձրաստիճան հոգնորականների հետ։ Իրլանդացի արհիները, կարծէք խոնարհուել և միանգամայն սքողուել էին և գոյութեան ոչ մի նշան չէին ցոյց տալիս, չնայելով որ, ինչպէս տեղեկացնում էին Իտալական ձեռնաս լրագիրները, ինչ որ մի ներքին, գաղտնի շարժումով էին տարրուած։ Հասկանալի է, որ ուղղակի միրկացնող փաստեր նոցանկատմամբ չկան և իրլանդական գաղափարի սերմանելու գործը դարձեալ ըստ առաջնոյն կտարուի։ Սակայն միաժամանակ մի նոր հարց է առաջ դալիս, որ առաջ է մղւում Իտալական լրագիրների կողմից։ «Կարսդ է արդեօք Հռոմի մէջ գոյութիւն ունենալ մի որոշ քարոզչական, գրգորի կենդրոն, որ ձեռնտու է Գերմանիային և նորա շահերին և որ ակնյայտնի մնասներ է հասցնում Իտալիայի գաշնակից Անգղիային։ Այդպիսի բանաձև է ստացել արմատական Secolo-ի էջերում իրլանդական յարաբերութիւնների հարցը։ Այդ հարցի արծարծողները յայտնում են, որ իրլանդական կոլեգիան է այդ մտքերի արծարծողն ու տարածողը, ուստի և կարեոր է իրլանդացի քահանաների վերայ լուրջ ուշադրութիւն դարձնել, որոնք այժմ Հռոմի իրենց միջավայր են դարձրել, և սկարզել այն հարցը, թէ որչափ մասնակցութիւն են ունեցած նոքա իրլանդական ապստամբութեան շարժումների գարգացման գործի մէջ։ Secola պնդում է, որ կան շատ կասկածի տանող հետեանքներ. եթէ միայն գործի վերայ լուրջ ուշադրութիւն և քննական հայեացք դարձնեն։

Մի լուրջ և իրադարձութիւններին լաւատեղեակ մի լրազրի կողմից այդպիսի մերկացումն, անշուշտ, հիմնուած պիտի լինի դրական հիմքերի վերայ և, եթէ հանգամանքներն այլ լինէին, թերևս շատ աւելի զարմանալի իրողութիւնների ու փաստերի վարագոյրը բանալու հնար լինէր։ Սակայն Իտալիայի կառավարութիւնը գտնուում է բացառիկ հանգամանքների մէջ, որոնք սահմանափակում են նորա գործունէութեան շրջանը, երբ առիթ է հանդիսանում երես-երեսի լինել կաթոլիկ աշխարհի հետ։ Պապական առանձնաշնորհումների և իշխանութեան պահապան Guarantigie օրէնքները կաթոլիկ կոլեգիաներին և վանական կարգերին կատարեալ և ազատ գործնէութեան ասպարէզ են շնորհում, միայն թէ այդ գործունէութիւնները քրէական պատժի ենթարկուելու շրջանը չանցնեն։ Ասձեռնմիելութեան (էկստերրիտորիալնութեան) արտօնութիւնը Հռոմի պատերի մէջ մի տեսակ «ապաստանի»

վայր է ստեղծել կաթոլիկ հոգևորահանութեան համար։ Եւ կաթութեկ հոգևորականների ամբողջ քաղաքական գործունէութիւնը՝ եթէ նոյն իսկ հտալիայի և նորա դաշնակիցների շահերի դէմ լինին բացայայտ կերպով, կարող է ազատ-համարձակ առաջ տարուիլ, ոչ ոքից իսկ թագցնելու կարիք չգգալով։ Մինչև վերջին տարիներս Հռոմէական վարչութեան քաղաքականութեան պարզ նշանաբանն էր—«Իտալիայի թշնամիները՝ Վատիկանի դաշնակիցներն են»։

Բայտ էութեան «անհաշտութեան» քաղաքականութիւնը միմիայն արտայայտութիւն էր միայն խօսքերով և ծածկուած էր հաշտելիութեան քաղաքականութեան փէշի տակ։ Բենեդիկտոս ԺԵ, զեռ ևս պապական աթոռ չըարձրացած, հտալիայի և Ֆրանսիայի աշխարհիկ իշխանութիւնների հետ բարի յարաբերութիւն ստեղծելու կողմնակից էր ինչ էլ որ չլինին Պապի առանձնակի փորձերի անյաջողութիւնն, այս վերջին տարիների ընթացքում, այդ նկատմամբ, սակայն և այնպէս ընդհանուր քաղաքականութեան պատկերը Ֆրանսիայի և հտալիայի հետ հաշտուելու և մօտենալուն էր ձգտում։ Իրլանդական գրգռիչ քաղաքականութիւնը վարում են հակառակ Բենեդիկտոս ԺԵ կամքի և առանց նորա աջակցութեան։

Բայց նոյն Բենեդիկտոս ԺԵ, պապական աշխարհիկ իշխանութեան մնացորդները պաշտպաննելու նկատմամբ, անշուշտ, անտարբեր չէ կարող մնալ, եթէ հտալական կառավարութիւնը կարենար քննել և ստուգել, թէ ինչ մասնակցութիւն են ունեցել Իրլանդական բարձրաստիճան հոգևորականները այդ գործի մէջ։ Ահա այն կախարդական շրջանը, որի մէջ են ընկած, պատմական անցեալի չնորհիւ, թէ հտալիան և թէ Վատիկանը, որ ոչ մէկին չի յաջողուում ենել, որչափ երկուստեք ջանքեր և բարի յարաբերութիւններ են լինում։



Ամերիկան Աստուածածնի բնկերութեան հարիւրամեակը.

Մայիս 9-ը Ամերիկեան Աստուածածնչի Ընկերութեան հարիւրամեայ տարեդարձն էր։ Այս առիթով կարգ մը փառաւոր հանդէսներ և ժողովներ տեղի ունեցան թէ Ուոշինկթոնի և թէ Նիւ Եորքի մէջ։ Ուոշինկթոնի մէջ գումարուած ժողովներուն մասնակցեցան նախ։ Ուիլսըն, Փոլսնախագահ Մարշըլ, Ներկայացուցիչներուն տան նախագահ Մը. Զէմֆ Քլարք և ուրիշ ականաւոր անձինք։ Հարիւրամեակի տօնախմբութեան վերջին ժողովը տեղի ունեցաւ Նիւ Եորք, Քառնիկի Հօլին մէջ, մեծ քաղմութեան մը

ներկայութեան։ Տօնախմբութեան մասնակցելու հումար ներկայացուցիչներ եկած էին Անգլիայէն և աշխարհի ուրիշ կողմերէն։ գրեթէ աշխարհի ամեն անկիւններէն հասած էին շնորհաւորութեան բազմաթիւ հեռագրեր։

Ինչպէս նախ, Ուիլսըն իր ուղերձին մէջ ակնարկած էր, Միացեալ նահանգներ այս ընկերութեան կազմակերպութիւնը և դործունէութիւնը կը համարին իրենց ազգային մեծ և ամենէն կարեոր ձեռնարկներէն մէկը։ Անոր հիմնադրութիւնը եղած էր Նիւ Եորքի մէջ, 1816-ի Մայիս ամսոյ 9-ին։ Ընկերութեան առաջին նախագահը եղած էր Ամերիկեան յեղափոխութեան կարեոր դէմքերէն մին, Էլայաս Պուտինօ, որ 1783-ին Քօնկրէսին նախագահն էր և որ յեղափոխութենէն վերջ ինք ստորագրեց անկախ Միացեալ նահանգներու և Մեծին Բրիտանիոյ միջեւ կնքուած դաշնագրութիւնը։ Անկէ վերջ ընկերութեան նախագահութեան հիմնադիրներէն մէկն էր, ձօն Գուլինսի Ատամս, Միացեալ նահանգներու նախագահներէն մէկը, և զեռ ուրիշ ականաւոր անձինք։ Դարձեալ այս ընկերութեան նպաստ մատուցած են Հռովմէազաւան եկեղեցին գատ բոլոր միւս քրիստոնեայ եկեղեցիներ և ընկերային խմբակցութիւններ առանց գաւանանքի և կարծիքի խորութեան։

Ընկերութիւնը իր առաջին հարիւրամեակը տօնեց մասնաւոր գոհունակութեամբ, որովհետեւ իր գուծունէութիւնը եղած էր խըզամտօրէն, անշահախնդիր և մարդասէր ու ձեռք բերուած յաջողութիւնը շատ զարմանալի։ Անիկա քրիստոնէական քաղաքակրթութիւնը ծաւալելու մեծագոյն միջնորդը եղած է։ Հնդկաստան, Ճարոն, Չինաստան, բաբրարոս Աֆրիկէ և մինչև անգամ Թիվէդ, «արգիլեալ երկիրը», Սր. Գրքի ազգեցութեան տակ կը դտնուին այսօր։

Կարելի՞ է դանել միջոց մը, փիլիսոփայական և կամ գիտական դրութիւն մը, և կամ կառավարական և ընկերային սիստէմ մը որ կարող է իր ազգեցութեան տակ միացնել աշխարհի այնքան բազմակեզու ցեղերը, որոնք բաժանուած են իրարմէ դարերու աւանդութիւններով, խորթ սովորութիւններով և կը մաքառին իրարու դէմ հակոտնեայ շահերով։ Ի՞նչ միջոց կարելի է գտնել, որուն ազգեցութեամբը ազգեր կարենան եղբայրանալ և ստեղծուի անոնց ամենուն մէջ իտէալի միութիւն։ Ա. Գրոց ծաւալումը այս նպատակին ծառայող միակ և մողական միջնորդն է, որ ազգերու մէջ Աստուծոյ հայրութեան և մարդուն որդիութեան գաղափարները սերմանիլով, վերջապէս պիտի մշակէ եղբայրութեան իտէալը և անոր ազգեցութեան տակ պիտի միացնէ ազգեր։

Հետևեալ թիւերը կընան գաղափար մը տալ ընկերութեան գործունէութեան մասին։ Այս հարիւրամեակին մէջ ընկերութիւնը տպագրած և ցրուած է ընդամենը 117,000,000 հատոր Սր. Գրքեր, հարիւր յիսուն տարբեր լեզուներով։ 1914-ին Միացեալ Նահանգներու մէջ միայն ծախուած Սր. Գրքերու թիւնէ 2,426,418, իննառուն տարբեր լեզուներով։ Այս դարաշրջանին մէջ ընկերութեան ծախսած գումար եղած է ֆ. ստ. 38,500,00։

Մոռանալու չենք թէ այս կեղրոնական և միւս ընկերութեանէն զատ Ամերիկայի մէջ կը գտնուին բազմաթիւ նահանգային և տեղական ընկերութիւններ ալ և մանաւանդ առանձին հրատարակչական ընկերութիւններ, որոնք Սր. Գիրք ծաւալելու մասին ունին իրենց բազմազրադ գործունէութիւնը։

Դարձեալ գոյութիւն ունի Բրիտանական Աստուածաշունչի Ընկերութիւնը։ որ կազմուած է 1805-ին, և իր գոյութեան հարիւր տասնումէկ տարուան ընթացքին ծաւալած է ընդամենը 263,565,501 հատոր Սր. Գիրք, վեց հարիւր տարբեր լեզուներով և գաւառաբարբառներով տպագրուած, և այս հսկայ ձեռնարկութեան համար ծախսած է ֆ. ստ. 86,113,430,00։ Միայն 1915 տարուան մէջ Բրիտանական Ընկերութիւնը տպագրած է 10,162,413 հատոր, և ծախսած ֆ. ստ. 1,343,240 00, և այս ըրած է այնպիսի ժամանակ, երբ Բրիտանական ազգը մահու կեանքի կոհիով բռնուած, ամեն կողմէն կ'արիւնի և կը քամուի։

Ամերիկեան Աստուածաշունչի Ընկերութիւնը իր Դործունէութիւնը Պոլսոյ մէջ 1858-ին սկսաւ, և շինեց այն շէնքը որ Bible House անունով կը ճանչցուիր Այդ թուականէն ի վեր ընկերութիւնը տպագրած ու տարածած է 505,355 աշխարհաբար, 52,146 գրաբար, 1080 կոյրերու և մեծ թիւով ալ արարատեան բարբառով Սր. Գրքեր։ ընդամենը 976,079 հատոր մինակ հայերէն։ Նոյն ընկերութիւնը տպագրած է նաև հայտառ թուրքերէն՝ 223,012 հատոր, յունատառ թուրքերէն՝ 127,371 հատոր, արարատառ թուրքերէն՝ բուն թուրքերու համար՝ 183,031 հատոր, իսկ բուն արարերէն՝ 1,859,257 հատոր, որոնց խիստ մեծագոյն մասը արդէն սպառած է։ Ասոնցմէ զատ նաև տպագրուած և ծաւալած է 14,000 ասորերէն, 73,000 պուլկարերէն, ինչպէս նաև պարսկերէն, քիւրտերէն, ևլն., ևլն.։ 1858-էն ի վեր ընդամենը Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ ծաւալած հատորներուն թիւն է 4,489,687։ Բրիտանական Աստուածաշունչի Ընկերութեան տպագրած հատորներու հաշիւը այս թիւերուն մէջ չպարունակուիր, թէպէտ ան ալ Պոլսոյ մէջ իր գործունէութիւնը կը շարունակէ Ամերիկեան ընկերութեան հետ ներդաշնակութեամբ։

Անշուշտ Աստուածաշունչի Ընկերութեան նպատակն է ամ-

բողջ մարդկային ցեղը տոգորել Սր. Գրքի ոգիովը և կամ տալ մարդկութեան հոգեոր փորձութեան այն լոյսը որ պարզ լեզուով արձանագրուած է Սր. Գրոց մէջ։ Սակայն այս գործունէութեան իրեւ արդիւնք ժողովուրդներ և ցեղեր գործնական և քաղաքակըրթական ուրիշ օրհնութիւններ ալ վայելեցին։

Արդէն յիշեցինք, թէ ընկերութիւնը մինչև այսօր գրեթէ վեց հարիւր տարբեր լեզուներով և գաւառաբարբառներով Սր. Գիրք հրատարակած է, Սրդ, այս վեց հարիւր լեզուներու քիչերը ունէին կանոնաւոր գրականութիւն։ Ընկերութեան թարգմանիչները պարտաւորուած են Սահակ-Մեսրովիներու պաշտօն կատարելով տառեր ստեղծել, քերականութիւն գրել ու այսպէս անգիր, անմշակ լեզուներուն գրական ընդունակութիւն տալ և անոնց միջոցով Սր. Գրոց բարձրագոյն խորհուրդները արտայայտել։ Օրինակ Գուրմաննի քիւրտերէն լեզուին յարմարեցուցին հայերէն տառերը և անով հրատարակեցին նոր կտակարանը և նոյն իսկ երգարան մը նոյնպէս Ամբրիկէի և Ասիոյ անծանօթ խորութեանց մէջ գըտնուած բազմաթիւ ցեղերուն լեզուները այնքան մը մշակեցին, որ անոնցմով Ս. Գրոց գաղափարները արտայայտելու կարող եղան։ Այս իրողութիւնը ինքնին Աստուածաշունչի ընկերութիւնը կը բարձրացունէ և ազգերը քաղաքակըրթելու ամենէն մեծ միջնորդը կ'ընէ։

Աստուածաշունչի ընկերութեան քաղաքակըրթիչ այս օրհնուաթիւնը վայելեր են մօտաւոր Արևելքի պղտիկ աղջերը, և նոյն իսկ մենք, Հայերս։ Սր. Գրքի աշխարհաբար թարգմանութիւնը, իր ունեցած գրական բոլոր թերութիւններով հանդերձ, մեր արդի գրականութեան ամենաուժեղ թափ մը տուած է։ Ամերիկան Աստուածաշունչի Ընկերութեան հրատարակած հատորներուն թիւին վրայ եթէ աւելացնենք Բրիտանական Աստուածաշունչի Ընկերութեան հրատարակած հատորներու թիւը, այն ատեն կ'ունանանք առ նուազն 1,500,000 հատոր հայերէն Սր. Գիրք։ Իսկ եթէ այս վիթխարի թիւին հետ բաղդատութեան դնենք բոլոր հրատարակուած աշխարհաբար հայերէն գրահատորներուն համագումար թիւը թերեւ վերջինս պղտիկ մնայ նախորդէն։

“ոչ նակ”